

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 174

Արդարացման Արեւելեան Օրթոտոքս տեսանկիւնը – Օրթոտոքս Եկեղեցին ուսուցանում է որ թեպէտ մարդը անկումից ժառանգեց մի պիղծ բնութիւն եւ տկարացած է, սակայն նա դեռեւս ունի իր բարոյական ազատութիւնը, եւ բնականօրէն կարող է ընտրել եւ անել բարոյական բարիք, եւ խուսափել ու ատել այդ ինչ որ չար է (Դոսիթէոս Հանգանակ, Հրովարտակ 14): Օրթոտոքս Եկեղեցին նաեւ ուսուցանում է որ անկման պատճառով մարդը միայն ժառանգում է Ադամի մեղաւոր (պիղծ) բնութիւնը ու ոչ նրա յանցանքը: Անկման եւ մարդկային բնութեան այսպէս հասկացողութիւնը ազդում է Օրթոտոքս Եկեղեցու արդարացման ու փրկանաւորութեան հասկացողութիւնը՝ քանի որ Քրիստոսը հիմնականում նկատում է որպէս մարդեղացած Տէրը քան թէ տառապող փոխանորդը, եւ Նրա մահը որպէս մահուան վրայ եղած յաղթութիւն՝ կոտրելով դրա զօրութիւնը, որի մէջ մենք մասնակցում ենք, քան թէ որպէս մեր մեղքերի յանցանքի վճարում որը յագեցնում է Աստծոյ արդարութիւնն ու բարկութիւնը՝ հռչակելով մեզ ուղղարար Նրանում (Ջան Մէլենդորֆ, Բիւզանդական Աստուածաբանութիւն, 1979, էջ 161):

Մեկնաբանելով Հռովմայեցի 3:26ը, Օրթոտոքս Սերտողութեան Աստուածաշունչը նշում է թէ՛ «Յիսուսի մէջ եղած շարունակական հաւատքն է այդ ձեւը որով մարդկութիւնը ստանում է Աստծոյ ուղղարարութիւնը: Արդարացումը (ուղղարար դարձելը) հաւատքով մի մէկ անգամայ «ոչ յանցաւոր» դատավճիռը չի, ինչպէս ոմանք կարելի է սովորեցնեն: Այլ այդ Քրիստոսի մեր մէջ ապրելն է, եւ մենք Նրանում (Գաղ 2:2): Ուստի, արդարանալ նշանակում է լինել հաղորդակից Յիսուս Քրիստոսի հետ մի շարունակական, շարժուն, եւ աճող կեանքում Նրա հետ»:

Մեկնաբանելով Հռովմայեցի 4:11-12ը Օրթոտոքս Սերտողութեան Աստուածաշունչը նշում է որ ուղղարարութիւն համարելը (վերագրելը) «չի վերաբերում մի պարզապէս օրինական դրքին, այլ նշում է որ Աստծոյ ուղղարարութիւնը իրապէս տրում է մարդկութեան շնորհքով: Այս ուղղարարութիւնը կերպարանափոխում է մարդուն ամբողջովին՝ ներքնապէս ու արտաքնապէս: Նրանք որ ասում են որ Աստծոյ ուղղարարութիւնը միայն մի արտաքին հռչակում կամ հրաման է որը չի իրապէս դառնում մերը փորձառականօրէն վրիպում են իմաստը եւ գրկում են ճշմարտութիւնից»:

Մեկնաբանելով Գաղատացի 3:6-9ը Օրթոտոքս Սերտողութեան Աստուածաշունչը նշում է թէ «համարել» նշանակում է «հաւատարիմ մասնակցութիւն», եւ «արդարացնել» նշանակում է «ուղղարար դարձնել եւ ուստի ուղղարար լինել»:

Գործք Առաքելոց 10:35ի վերաբերեալ այն նշում է թէ՛ «Արդարացումը պարզապէս մի մէկ անգամայ եղելութիւն չի, այլ մի շարժուն, շարունակական ընթացք է: Բացի հաւատք, երկու պայմաններ են տրել այստեղ՝ Աստուած ընդունում է նրան որը վախենում է Նրանից եւ ուղղարարութիւն է գործում: Այս չի մերժում արդարացումը հաւատքով, իսկ յստակօրէն ցուցադրում է որ արդարացումը միայն հաւատքովը չի (Յակոբոս 2:24)» (տեսէք Դոսիթէոս Հանգանակ, Հրովարտակ 13 եւ 14):

Օրթոտոքս աստուածաբանութեան մէջ Եկեղեցու խորհրդները նաեւ կատարում են շատ կարեւոր դեր փրկութեան վերաբերեալ: Օրթոտոքս Եկեղեցին ուսուցանում է որ խորհրդների միջոցով մատակարարում է արդարացման (կամ փրկութեան) համար անհրաժեշտ աստուծային շնորհք, կարելի դարձնել որ մասնակիցները լինեն Քրիստոսի փրկանաւորական գործի հաղորդակիցներ: Ուստի խորհրդները փրկութեան հարկաւոր ու ազդեցիկ պատճառներ են (Ջան Կարմիրիս, Արեւելեան Օրթոտոքս Աստուածաբանութիւն, 1995, էջ 24): Մկրտութեան խորհրդին մասնակցութիւնը անհրաժեշտ է փրկութեան համար, որի միջոցով մասնակիցը «նորից է ծնում», մտնում է Աստծոյ հետ մի ուղիղ յարաբերութեան մէջ, դառնում է Քրիստոսի մարմնի մի անդամ, եւ սկսում է իր ճամբան դէպի աստուծային բնութեան հաղորդակից դառնալը: Եկեղեցու միւս խորհրդները՝ ինչպէս դրոշմը (օծումը) կամ Հաղորդութիւնը, նաեւ կարեւոր եւ անհրաժեշտ են փրկութեան համար: Դրոշմի խորհրդում հաւատացեալը ստանում է Սուրբ Հոգուն ու Նրա պարգէւները. եւ Հաղորդութեան խորհրդի միջոցով հաւատացեալը շարունակում է իր արդարացման (կամ փրկութեան) մէջ, եւ աստիճանաբար ուղղարար է դառնում:

Ուստի տեսնում ենք որ Օրթոտոքս Եկեղեցին յստակօրէն մերժում է արդարացումը որպէս մի օրինական հռչակում, հաստատուած միմիայն Քրիստոսի ուղղարարութեան հիման վրայ, որը վերագրում է մեր հաշիւն միայն հաւատքի միջոցով: Փոխարէն Եկեղեցին միացնում է վերածնութիւնը, արդարացումը եւ սրբագործութիւնը ընդհանուր փրկութեան ընթացքի մէջ, ուսուցանելով որ այս սկսում է մկրտութեան խորհրդով՝ ուր մեր մեղքերը ներում են, մենք վերստին ծնում ենք եւ դառնում ենք Քրիստոսի մարմնի անդամներ. եւ այս փրկութիւնը պահպանում է շարունակական հնազանդութեան կեանքի միջոցով՝ մինչ մենք մասնակցում ենք միւս խորհրդներում, կատարում ենք ուղղարարութեան գործեր, եւ ապաշխարում ենք մեր մեղքերից. եւ այս բոլորի մէջ մենք գործունեայ ենք՝ համագործակցելով Աստծոյ շնորհքի հետ, դառնալով աւելի ու աւելի ուղղարար:

Այս արդարացումը կամ փրկութիւնը հաւատքով ու գործերով է, որը հակառակ է Աստուծաշնչի ուսուցումներին՝ մէկ ձեռքում նազեցնելով ու արժէքագրելով մեր փոխարէն կատարուած Քրիստոսի գործի եւ ուղղարարութեան կատարելութիւնը, բաւարարութիւնը ու փառքը, եւ միւս ձեռքում բարձրացնելով ու արժէքաւորելով մարդու գործերը՝ որը միշտ կ'լինեն մեղքով կեղտոտուած այս կեանքում եւ ուստի անընդունելի Աստծոյ առջեւ մեր փրկութեան համար: